

Մի Օր՝ «Օրիորդ» Օլգան ու Գրաշարը

(ըստ Ալազանի «Օրիորդ» Օլգայի)

Վահրամ Ալազանը ծնվել է 1903թվականին Վան քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է Արարք թաղամասի ծխական դպրոցում: 1915թվականի աղետից հետո ընտանիքով ապաստան է գտել Երևանում: 1918 թվականին «Ուրարտու» տպարանում աշխատել է որպես գրաշար: Վահրամ Գաբուզյան ստորագրությամբ առաջին բանաստեղծությունը՝ «Կարմիր հաղթանակ» լույս է տեսնում 1921թվականին, այնուհետև պարբերաբար հրատարակվում են նրա բանաստեղծությունները, պոեմները, վեպերը, պատմվածքները, ակնարկները՝ արդեն «Ալազան» մակագրությամբ: Մեկ տասնամյակ ծավալած գրական ակտիվ գործունեությունը Ալազանի համար ավարտվում է 18 տարվա դաժան արքայադատում: 1954թվականին լրիվ արդարացվելուց հետո վերադառնում է Երևան և մինչև մահը (1966թիվ) կաթվածահար գամվում անկողնուն: 1990թվականին լույս է տեսնում արքայի և ստալինյան բռնաճնշումների մասին վկայող նրա «Տառապանքի ուղիներում» գիրքը:

Անհնազանդ տառերը, որ ցրվում են, դուրս պրծնում տառարկղ-պահարանից, բախվում են Գրաշարի կլոր շրջանակով ակնոցի ոսպնյակներին: Պիտի հնազանդեցնել նրանց, խնամքով հավաքել, լիտերներից բառ, նախադասություն, շարվածասյուն կազմել: Եվ այսպես ամեն օր՝ մինչև «Գրաշարանոցից դեպի գրականություն», մինչև Վահրամ Գաբուզյանից՝ Ալազան, մինչև «Օրիորդ» Օլգան, որ տառամիջի հպանցիկ լույս է, ձուլածոյի հիմնական գծերի միջև եղած հեռավորություն.

գաղթից - արքայ


օրերից առաջ - օրերից հետո

Բայց հեզնական չակերտ-ցանկապատի մեջ ներառած «Օրիորդ» Օլգան, որ ոչ բանաստեղծություն է, ոչ պոեմ, ավելի շատ նամակ-բացիկ, գրաշարի տետրականման-խոստովանություն՝ տպված 1925թվին Երևանում՝ (Շապիկի նկարն ու փորագրությունը՝ Ե. Դանչոյի, տիտղոսաթերթին գրված է՝ «Կոմյերիտական սիրով Մարոյին՝ ինձանից» - Մարոն՝ Ալազանի կինն էր, արքայակիցը, կյանքի հավատարիմ ընկերը):

Ուրեմն Գրաշարը մեկնարկում է՝ ցուցանելով Օրերի միջանկյալ կենսագրությունը.

Օրերդ
զգվանք ու շոյանք,
օրերդ -
անուշ նիրվանա.
շաքարի պես քաղցր օրերդ
հիշո՞ւմ ես,
զնացին,
էլ չեկան:

Օրերը -
որ գիտեինք քեզ բերել
գուրգուրանք,
արբեցում,
ու «սեր»,
և ոսկի ասպետներ փառքի
որոնք գիտեին շանտանում –
մերկությունը քո –
լիզել:

բառերը դնել կողք կողքի, ստանալ Օլգայի  *մարմինը*

շանտանում ինքնավաճառվող հեշտանքի ամբողջությունը լիզելու, ծծելու, քամելու
կրկնության համար

Օրերը –
քեզ համար –
հարսանիք,
ինձ համար
մահ
ու մահերգ,
քեզ համար –
ցոփություն հաճելի,
ինձ –
տանջանք,
արնոտում
ու վերք:

Օրերի համադրությունը հաճույքի ու մահվան կենակցությունն է, որոնք մանկական
ամիջականությամբ փոխվում են տեղերով: Գրաշարի ծանր առօրյան Ալազանը

նկարագրում է իր «Ճանապարհին» ծրագրային վեպում, որ նվիրում է տպագրական բանվորներին.

«Այդպես է հուլիսյան արևը և խստասիրտ և արշավող:

Այդ արշավի հանդեպ անգոր են բռնացող թիթեղե թևերը պատուհանի վերևում: Հուլիսյան շոգի ճնշիչ շնչի ներքո, նրանք խնամքով վերցնում են յուրաքանչյուր տառը, միաձուլում, շաղկապում իրար և արճիճե զանգվածին տալիս շունչ ու կենդանություն:

Եթե թիթեղաթև բռնանը չխանգարի, ժամացույցի միապաղաղ շնչառության հետ լսվում է տառերի ու տառակալի հանդիպման միալար չխչխկոցը:

Արևածաղկի են նման, գլխահակ և անխոս: Հայացքները մեկ, ձեռագրի տեղերի մեջ են խորասուզվում, մեկ սլանում տառարկղի բազմաթիվ փոսիկներ ցանցում: Մեկ սպասում, մեկ արշավում: Եվ շոգը ճնշիչ է, և թիթեղաթև բռնանը անգոր:

Ա՛խ այդ խմբագիրները և այդ հեղինակները: Գրչի անփույթ մի շարժում և ստիպված են նրանք բռպեններով թողնել ձեռների արշավը, ետ մնալ ընկերներից, լարել տեսողությունը, ավելի կռանալ, խորասուզվել կոտրտված գծիկների մեջ ու մտքից կռահել բառի իսկությունը... Ա՛խ այդ խմբագիրները և այդ հեղինակները... Ինչո՞ւ, ինչո՞ւ են ստիպում արճիճի փոշի շնչող այդ մարդկանց հոգնել այնքան ու լարվել ավելի, երբ հուլիսյան արևը հեզնում է թիթեղե թևերը և երբ բարակ քամին անգամ կրակի շնչով է լցնում գրաշարանոցը»: *

Մարմինը վաճառող Օլգայի մեջ Գրաշարը կրկնում է իր օրվա մահը, բայց մեռնելով հաճույքից, որ բոլոր մահերից, կարծես ամենադժվարն է, ամենաանցանկալին, քանզի սադո-մազոխիստական սիրո-հաճույքը այն մահ է, որին Գրաշարը վերապրել է ուզում:

«Օրհորդ» Օլգայի կյանքի մինիմալիզմը



Քեզ «սիրող» ասպետի մտրակ,
երբ իջներ կորացած մեջքիս, -
գիտեիր աներես ժպտալ,
ու փարվել նրան լպիրշ:

Խորհրդային կարգերի հաստատումը սահմանում է Գրաշարի նոր օրը: Եվ նոր օրվա հետ՝ նոր մարդը «Օրհորդ» Օլգային այլևս չի ներկայանում. ներկայացողը պատմության հեղաշրջությունն է՝ Օլգայի համար դեռևս անձանոթ, օտար մարմին, որ հառնում է որպես անխուսափելի մի աստղ ու ֆուտուրիստական թռիչքով դաշվում 1923թվականի «Մուրճի» 13-րդ էջին: Խոսողի ներկայացուցիչը, այն անձանց հետ միասին, որոնց անունից հանդես է գալիս, առաջին դեմքի «մենքն» է, որն այսուհետ յուրայինների ձայնն է, ուստի պարտավոր է բանաստեղծել և բանաստեղծում է.

և
և
և
և
վես,

ԱԼԱՁԱՆ

Մ Ե Ն Ք

Կըրկեզ

ու մշտակեզ

ասազերի պես

ն ու գեղեցիկն

սրտե՛ր ու ճեղք,

սրտե՛ն՝ բարի, սրտե՛ր՝

հուժկու, հար ու կարծիր

յերկաթներից ձուլված՝ արի:

Սրտերում մեր հազար կրոնց հսկա կնոց,

հազար քուրա, հազար վառվող կրակ ու բոց՝

ու նրա խոր խոռոչների ուժնն մեկում՝ մի՛ մի՛ դարբնոց.

հազար դարբին հազի՞ ու ոսկուն և անասանն հարվածում են կրօնազորն,

հարվածում են կուռ ու արի մեր սրտերի խոռոչներում քրանած մարդկանց խմբերը հո՛:

յերկաթից ու պղնձից ձուլված, կերտված, ամենահազի՞ ու կրաշագործ ջրի՛նք ունենց,

մեր ուժնն մի յերակում հազարավոր հո՛ ու անեղ խմբեր ունենց անհաղի՞ մարդկանց,

մարդկանց՝ վերսնց մի՛ մի՛ հսկա սրտեր ունեն հազարադուռ ու լայնարոտց,

սրտեր՝ արև, սրտեր՝ աշխարհ՝--անձայրածիր, լայնատարած,

կրածորան ու կրարար՝ մետաղներից կերտված, ձուլված,

սրտեր՝ հուժկու, ծովածավալ ովկյան ձուլված:

Մեր հազի՞, յերկաթ յերակների ուժնն կազմում

զորակոչ ենք հայտարարել ու՛ շինք թողնում

վոր մի կաթիլ մեր արյունից մեր Փրփնուր լճի դնս,

կամ թե թաքչի յերակներից մեկի խորքում ու ջրանու:

Յերակներում մեր յերկաթե՛ն Մեր մի կաթիլ արյունը վառ՝

աշխարհաշին, հսկայա՝ մի արև և հովերժավառ,

զոր դարբրիններին՝ ու մեկ ենք հազար արև

աշխատանքի՛ն թե՛ ու վարար մեր

հսկա մարտի հազի՞ ապուռ

կանչել սրտե՛ն

1922

«Օրիորդ» Օլգան՝ պարբերաշրջանի մասնավոր միջադեպ /episodion/ «բացի դրանից մտածը»: Եվ հաղթարշավի ելած Գրաշարը Օլգայի դիմաց առաջինը իր –ես-ն է բերում. ես-ը, որ հազարների արտանկարն է.

Հիմա –
ես եմ դեմդ հաղթական,
տեսնում ես.
ուրիշ հազարներն ինձ պես,-
որ կյանքն են կերտում մեր բազկով,
որ կերտել ենք երեկ,
(հիշո՞ւմ ես
երբ շանտանում դու շոյվում էիր),
կերտում ենք այսօր,
կերտելու ենք և վաղը:

Պատմության հեղաշրջության
մրցակիցը Օլգայի մարմինն է.
մարմնի անփոփոխությունը,
որ շարունակ ապստամբում է
Պատմության դեմ

երբ կյանքը
ինձ է ծիծաղում. –
դու էլ –
ծիծաղուն.-
հելեյ, դեմս ես կանգնել,
նորից ներկել ես այտերդ,
շուրթերդ,
ցցել ես կուրծքդ խայտացող,
«սեր տաճող» աչքերդ
հառել ես,
մոռացել ես կարծես երեկդ,
հինդ,
ու ասում –
«առ,
գնիր,
գրկիր ինձ»:

Օլգային մերժելու համար պատմությունը նրան է պարզում իր վերարտադրած ստեղծագործությանը՝ կոմյերիտ աղջկան, «որի այտերք ներկ չունեն, ծամված չեն, ծախու չեն, որի շուրթերը – քամված չեն, ու մարմինը մերկ – երբեք հրապարակ բերված չէ, ողջակեզ դառնալու – դրամի, կրքի: Ահա, նրան եմ ես սիրում»:

*Իսկ դու
«Օրհորդ» Օլգա*

*կմնաս մեր ճամփին
ոնց փոշոտ մոռացված մի քար*

*դեռ ներկիր կաշիդ ծախու
ու սպասիր
գուցե հետ գան օրերը քառթու*

Ամեն ինչ խորհրդայնացել է, պիտի խորհրդայնացվի նաև մարմինը, «գնվող» մարմինը պիտի *փոխարինվի* «օրինական» մարմնով, որն ավելի «հարմար» է, ավելի «մատչելի»՝ *կառավարելի է*.

*երբ երեկ –
արնիս մեջ –
քրտինքիս գնով,
տանջանքիս գնով –
դու գնվում էիր*

Այնպե՛ս հեշտ:

Ալազանը իր «Եռագույնի ու մահի երկրում» հատորի մեջ այսպիսի մի դեպք է վկայում.

«Աստաֆյան փողոցի վրա, այժմյան կուլտուրայի տան դեմի խանութում, դաշնակցական ծուռ բերան լիազորը շաքարավազ էր բաշխում գաղթական կանանց:

Հյուծվածների հերթն էր գնում:

Ֆանտազիա ծագեց հայդուկ լիազորի գլխում:

Զվարճալի խաղ խաղալ դժբախտ այդ զոհերի գլխին:

Եվ որոշեց շաքարի կնիշկաները կնքելու տեղը՝ կնքել շաքար ստացողների այտերը:

Համոզեց թե՛ պետք է ստացողների երեսները փեչատել, որ նրանք կրկնի չգան ստանալու:

Զոհերը համոզվեցին:

Եվ սկսվեց հրեշավոր խաղը:

Ինչ կարող էին անել դժբախտ զոհերը:

Դուրս էր գալիս յուրաքանչյուր հաղթական կինը, աղջիկը, «հայուհին», ձեռքին շաքարավազի տոպրակը և գունատ ու խորշոմալի այտերին եռանկյուն դրոշմը:

Ռուսների նման պայթեց այդ քստմենտի իրողությունը և մի քանի ժամ հետո, մինչև վերջին փեչատավոր կանացի երեսը դուրս էր գալիս շաքարի խանութից, այնտեղ ներխուժեցին տաճկահայ խմբապետերը և ի պաշտպանություն իրենց մայրերի, քույրերի «նամուսի», հայհոյանքների որոտի միջից, սկսեցին կրունկների տակ ջարդոտել շաքարաբաշխ լիագործի ոսկորները: Տրորված դիակի գլխին ուշք բերելուց հետո, տաճկահայ վրիժառու խմբապետերը, նույն եռանկյուն կնիքով փեչատեցին նրա այտերը ու ճակատը և իրենց «հանդիսավոր» թափորի մեջ առած սկսեցին պտտեցնել նրան մայրաքաղաքի գլխավոր և ապա երկրորդական փողոցներով:

Մայրաքաղաքում մեծ թամաշա էր» : **

Հիմնովին փոխարինություն է

կուսակցությունը *փոխարինել* է կուսակցությանը, կարգը՝ կարգին, փեչատը՝ փեչատին, Արևվյան փողոցը *փոխարինել* է Աստաֆյանին: Նոր պատմությունը իր սենյակը կահավորել է նույն առարկաներով բայց համոզում է, որ առարկաները ուրիշ են: Այդ հաղեայան աշխարհում, Ստիքս գետի ափին, դեռ կանգնած է մարմինը վաճառող Օլգան՝ «*մենակ ու պարտված*»: Գետի մյուս ափին գրաշարն է, որ ոչ մոտենում է նրան ոչ հեռանում: *Արևածաղկի նման գլխահակ է*: Նայում է *թիթեղաթն բռնանին*: Խնամքով հավաքում է տառերը, հնազանդեցնում նրանց, լիտերներից բառ, նախադասություն, շարվածայուն է կազմում: Օլգայի համար հորդորի թելով ազուցում է փրկողա՞կ: Մա «Օրիորդ» Օլգայի մարմինը պատմականացնելու վերջին փորձն է և դրանով նրա կյանքը փրկելու Գրաշարի վերջին հույսը:

Օլգա,

պարտված Օլգա,

էթե ուզում ես ապրել դեռ,

լինել ուրախ,

ու սիրվել դեռ,-

առ,

կապույտ շապիկս քեզ

հագիր,

մտիր բանակը մեր

ու բանիր:

Թե չէ,

թե չգաս,

չբանես մեզ հետ,

մեզ մոտ,

կոշտ վրձինով աշխատանքի -

չներկես այտերդ քրտինքով.
խույս տաս –
մրից,
հրից,
(նորից հին օրերիդ սպասես) –
թշվա՞ռ
Կմենես մենակ
ու անօգ
և մի թև իսկ չի լինի
դագաղդ տանող

Օլգա !

Ափից ափ, ձուլածոյի հիմնական գծերի միջև եղած հեռավորության տառամիջի լույսը կմնա «Օրիորդ» Օլգան: Նա կպահպանվի աքսորված գրաշարի տետրականման-խոստովանության մեջ՝ որպես *հին ու նոր* պատմությանը շրջանցած *Մի Օր*:

* Ալազան՝ «Ճանապարհին», Վաղարշապատ 1929թ. էջ 5-7

* Ալազան՝ «Եռագույնի ու մահի երկրում», Երևան 1931թ. էջ 44-45